Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝Արժեքային համակարգի ձևավորումը <<Մայրենի>>, <<Գրականություն>> և<<Հայ գրականություն>> առարկաների դասավանդման ընթացքում

Կատարող՝ Խաչատրյան Փառանձեմ

Դպրոց՝ Գ. Զոհրապի անվան հ. 97 ավագ դպրոց

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Կազմակերպություն՝ Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն----------էջ 2-3

Հետազոտության նպատակը, խնդիրները, մեթոդաբանությունը--էջ 3-5

Հիմնական մաս----------էջ 5-18

Եզրակացություն----------էջ 18-19

Գրականության ցանկ----------էջ 20

…Թէպէտ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, եւ զօրութեամբ տկար եւ ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշատակի…:[1]

Մ. Խորենացի << Հայոց պատմություն>>

Ներածություն

Կրթությանը միշտ կարևոր նշանակություն է տրվել հայ իրականության մեջ: Իր սկզբնավորման ժամանակներից հայ դպրոցը եղել է ժողովրդի քաղաքական ու ազգային գոյատևման ու զարգացման գրավականը: Հայաստանում կրթությունը ավանդաբար բարձր վարկանիշ է ունեցել: Այսօր էլ պետական ու ազգային խնդիր է համարվում կրթության համակարգի բարելավումը, միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը, դասավանդման նոր մեթոդների կիրառումը:

Հայ գրականություն առարկան միշտ իր կարևոր ներդրումն է ունեցել հայ մանուկների ազգային մտածելակերպի, ազգային արժեքների ձևավորման գործընթացում: Դարեր շարունակ մեր պատմիչների աշխատություններն օգտագործվել են որպես դասագիրք և ազգային, հայրենասիրական ոգով դաստիարակել բազում սերունդներ:

Ինչքան էլ որ փոխվեն հասարակությունների մտածելակերպը, արժեհամակարգը, վերաբերմունքը ժամանակակից երևույթների ու գործընթացների հանդեպ, միևնույն է, մատաղ սերնդին պետք է դաստիարակել ազգային արժեքներով ու հերոսական անցյալի օրինակներով: Բայց այսօր հասարակության մեջ կարծես թե երկրորդ պլան է մղվել անհատի հոգևոր աշխարհը, երեխաների դաստիարակությունը ազգային, մշակութային արժեքներով:

[1] Տե՛ս Մովսես Խորենացի <<Հայոց պատմություն >> Էջմիածին Տփղիս

Այսօր, երբ նյութականացվել են ամբողջ աշխարհն ու մարդկային հարաբերությունները, մարդը հեռացել է արվեստից, մշակույթից, գրականությունից, որի արդյունքում հոգևոր արժեքները աստիճանական անկում են ապրում:

Դպրոցների, ուսուցիչների կարևորագույն նպատակն ու խնդիրն է սովորողների մեջ ձևավորել և զարգացնել ազգային արժեքային համակարգ, ազգային մտածողություն: Իսկ ինչ է <<արժեհամակարգը>>: <<Արժեհամակարգը>> մանկավարժական գիտության մեջ լայն հասկացություն է: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկած համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության, պատմության դերը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Մեր օրերում հրատապ է անհատի հոգևոր զարգացման հիմնահարցը ազգային մշակույթի, արժեքների պահպանման և գալիք սերունդներին փոխանցման համատեքստում:

Հետազոտության նպատակը: Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել և հիմնավորել հայ դպրոցականի ազգային արժեհամակարգի, ազգային մտածելակերպի ձևավորման գործընթացում մայրենի, գրականություն, հայ

գրականություն առարկաների դերն ու կարևորությունը նաև պատմությունից դասեր քաղելու անհրաժեշտությունը: Դասաժամերի ընթացքում բացահայտել սովորողների վերաբերմունքը ազգային հերոսների, գեղարվեստական կերպարների պատմական կարևոր իրադարձությունների վերաբերյալ իրենց ունեցած գիտելիքները, վերհանել սխալները, թերությունները:

Անհրաժեշտ է կիրառել մեթոդական հնարներ, ուսուցման ժամանակակից մեթոդներ՝ սովորողների մոտիվացիան բարձրացնելու համար:

Հետազոտության խնդիրները: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Հետազոտության մեթոդաբանությունը: Ելնելով հետազոտության մեջ առաջադրված խնդիրներից՝ կարելի է կիրառել հետևյալ մեթոդները. Կերպարային քարտ. Սա հրաշալի միջոց է պատմական կարևոր իրադարձությունները տարբեր կերպարների դիտանկյունից ուսումնասիրելու համար: Քարտը ներկայացնում է տվյալ իրադարձության կերպարների մտադրությունները, հուզական վիճակները, տեսանկյունները: Կերպարային քարտը կարող է կիրառվել պատմական ակտիվ մտածողություն խթանող տարատեսակ հարցադրումների քննարկման համար:[2]

Պատմական կերպարներին անդրադառնալը հնարավորություն կտա ներկայացնել ուսումնական նյութը, որը դրական ազդեցություն կունենա սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության համար:[3]

---

[2] Տե՛ս Գիրք պատմության ուսուցման ինչու՞, ինչպե՞ս, Պարադիգմա կրթական հիմնադրամ, Երևան 2020թ. էջ 39

[3] Տե՛ս Հայագիտությունը դպրոցում գիտամեթոդական վերլուծական հանդես, Երևան 2017թ. էջ 39

Ներկայացվող մեթոդներից են նաև մտագրոհ, կերպարային քարտ, դերային խաղ, մտածի՛ր, զու՛յգ կազմիր, քննարկի՛ր, բանավեճ, ուղղորդված ընթերցանություն, խմբային և անհատական աշխատանքներ, պրիզմա:

3Հայագիտությունը դպրոցում գիտամեթոդական վերլուծական հանդես, Երևան 2017թ. էջ39

Հիմնական մաս

Մայրենի, գրականություն, հայ գրականություն առարկաների դասավանդման նպատակը ազգային ինքնագիտակցություն ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերը գիտակցող անձի զարգացումը, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորումն է:

Դասավանդման հիմնական նպատակներից մեկն է սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային և համամարդկային արժեքներին, պատմական և գեղարվեստական հերոսների օրինակով նրանց մեջ սերմանել բարոյական արժեքներ՝ մարդասիրություն, բարություն, ընկերություն, ազնվություն, պատվախնդրություն, պատասխանատվություն, հաստատակամություն, բարեխղճություն և լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյակամային այլ հատկանիշներ: Այս արժեքներն ուսուցանելիս առաջնորդվում ենք հայոց լեզվի և գրականության առարկայական չափորոշիչներով, որն առաջարկում է ուսումնական գործընթացի հետևյալ տեսակները՝անհատական գործունեություն, խմբային գործունեություն, զույգերով գործունեություն, խաղային գործունեություն: Իհարկե նշված տեսակները խստորեն տարանջատված չեն: Նույն դասի ընթացքում կարելի է աշխատել և՛ անհատապես, և՛ զույգերով, և՛ խմբերով: Մեկ դասաժամ էլ կարելի է նվիրել խաղային որևէ գործունեության՝ դերային խաղի, կամ ըստ գրական երկի կազմակերպվող բեմականացման, լեզվական մրցույթների և այլն:

5-րդ դասարանի մայրենիի յուրաքանչյուր բաժնի նյութերն ուսումնասիրելիս բաժնից առաջ տրվող առաջադրանքների կատարումը կարելի է իրականացնել <<Մտածի՛ր, զո՛ւյգ կազմիր, քննարկի՛ր>> մեթոդական հնարի միջոցով:Այսինքն աշխատանքն անհատական է, ապա սովորողը շարունակում է նույն թեման կամ հարցը քննարկել զույգի հետ:Ապա նրանք երկուսով դասարանին են ներկայացնում իրենց քննարկումների արդյունքները: Սկզբնական շրջանում կհնչեն կրկնվող կարծիքներ,

սակայն սովորողներն աստիճանաբար կվարժվեն իրար լսելուց հետո չկրկնել արդեն ասվածը, որոնել և գտնել նոր գաղափարներ և մտքեր:

Մուտքի առաջադրանքները կարելի է կատարել աշակերտների հետաքրքրությունները խթանող մեթոդական հնարների միջոցով:Օրինակ՝ 5-րդ դասարանի դասագրքում <<Երկնքից երեք խնձոր ընկավ>> բաժնի մուտքի առաջադրանքը կարելի է կատարել <<Մտքերի տարափի կամ մտագրոհի>> մեթոդով, որը, ճիշտ է, խմբային աշխատանքի պարզագույն մեթոդ է, բայց արդյունավետ ձև է:Մեթոդը կիրառելիս ուսուցիչը պետք է բացառի ցանկացած քննադատություն և մեկնաբանություն:Պետք է խրախուսել արտահայտված յուրաքանչյուր միտք և գրառել բոլոր ասածներն անխտիր:<<Հեքիաթ>> բառի շուրջը կգրանցվի ամեն մեկի ասածը և կստացվի մոտավորապես այսպիսի բառախումբ՝թագավոր, արքայադուստր, բարի, չար, խնձոր, քաջ, հուրի-փերի, կախարդ, հրեշ, տատիկ, գայլ, հրեղեն ձի և այլն:

Ապա կխմբավորեն ասածները, որի ընթացքում կբացահայտվեն ոչ միայն հեքիաթներին հատուկ գծերը՝ սկիզբն ու վերջը, հիմնական բովանդակությունը, այլ նաև հնարավոր կլինի սովորողների ուժերով տարբերակել հեքիաթների տեսակները:

Հետո ավանդական հարց ու պատասխանի միջոցով կարելի է առաջարկել, որ թվարկեն իրենց սիրած հեքիաթները և ասեն, թե ինչու են հենց այդ հեքիաթը սիրում:Կարելի է ամբողջ դասարանին պատմել տալ որևէ ծանոթ հեքիաթ՝իրար լրացնելով և միմյանց շարունակելով:Կարելի է վերհիշել նաև այդ հեքիաթի հիման վրա նկարահանված ֆիլմը կամ մուլտֆիլմը: Պիտի հնարավորություն տալ, որ բոլորն ազատ ու անկաշկանդ արտահայտվեն, տպավորությունները հաղորդեն: Եթե կան աշակերտներ, ովքեր տվյալ հեքիաթը և՛ կարդացել, և՛ դիտել են կինանկարը, պետք է հնարավորություն տալ , թր համեմատեն գրական ստեղծագործությունը և դրա հիման վրա նկարահանված կինոնկարը:Սա շատ կարևոր է, որովհետև ընդգծվում է գրական-գեղարվեստական երկի առաջնայնությունը և կարդացած լինելու առավելությունը:

Այս քննարկումներից հետո, երբ ուսուցիչը առաջարկի, թե հեքիաթները իրենց ինչ են սովորեցնում, հաստատ կնշեն՝ բարություն, ազնվություն, հայրենասիրություն, ծնողասիրություն, ընկերասիրություն և այլն, իսկ թե ինչպիսին չպետք է լինել՝ագահ, չար, ուրիշին վատություն անող, ընկերոջը դավաճանող, հայրենիքը չսիրող, ծնողին չհարգող և այլն:

Ավելի որոշակի թեմայի շուրջ մտածելու համար աշխատանքը կարելի է կազմակերպվել ԽԻԿ համակարգով, որը ոչ միայն խթանում է սովորողի

մտածելակերպը, այլ որոշակի հետաքրքրություն է առաջացնում կարդալու գործընթացի հանդեպ:Ընտրելով<< Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի մեջը >> հեքիաթը՝ վերնագրի քննարկումը կարելի է <<Բանավեճի>> մեթոդով անցկացնել:Այս մեթոդը խիստ արդյունավետ է. Այն մարդուն սովորեցնում է հարգալից վերաբերմունք դրսևորել դիմացինի հայտնած կարծիքի հանդեպ, քննադատել ոչ թե մարդուն, այլ գաղափարները:Այս դասարանում դեռ վաղ է խոսել գիտականորեն հիմնավորված բանավեճ անցկացնելու մասին, սակայն կարելի է կիրառել, քանի որ այս մեթոդը խթանում է գիտելիքի ձեռքբերումը: Սովորողը իմանում է, որ առանց գիտելիքի որոշակի պաշարի դժվար է դիմացինին ապացուցել սեփական տեսակետը կամ էլ ճիշտ ըմբռնել նրա բերած փաստարկները:

Հեքիաթի ուսուցման խթանման փուլում ուսուցիչն առաջարկում է մտածել վերնագրի մասին: Մտքերը կարող են նաև գրի առնել: Հարկավոր է թույլ տալ, որ աշակերտները մտածեն: Հաջորդ քայլը մտքերի փոխանակության կամ գրառումները ընթերցելու փուլն է: Կարծիքներն ընթերցելիս ձևավորվում են արժեհամակարգային մտքեր ազահության, անազնվության, չարության նաև դրական հատկանիշների մասին:

Խթանման փուլում չկան ճիշտ և սխալ մտքեր, կան տեսակետներ և կարծիքներ, որոնք բոլորն էլ հարգանքի պիտի արժանանան:

Իմաստավորման փուլում կիրառվում է <<Ուղղորդված ընթերցանություն>> մեթոդական հնարը: Կարդալիս ուսուցիչը մեջընդմեջ ընդհատում է և հարցեր տալիս, թե հետո ինչ է լինելու: պատասխանների մի քանի տարբերակ լսելուց և քննարկելուց հետո նորից են շարունակում կարդալ: Այս ձևով բոլոր աշակերտները ներգրավվում են պրոցեսի մեջ: Երեխաները հնարավորություն են ունենում հայտնելու իրենց վարկածները:

Կշռադատման փուլում կատարվում են քննարկումներ, նոր վարկածներ, դեպքերի և գործողությունների նոր ընթացք, նոր հերոսի ներմուծում և հեքիաթի ինքնատիպ շարադրանք նույն կամ սովորողի ընտրած վերնագրով, հարցազրույց հեղինակի կամ հերոսի հետ: Կշռադատման փուլում ուսուցչին կօգնեն հարցերն ու առաջադրանքները: Թեման կարելի է ամփոփել դասարանին տրվող ինքնուրույն կամ խմբային աշխատանքով: Գտնել և դուրս գրել հեքիաթի վերնագրի նման արտահայտություններ, նախադասություններ, այսինքն առածներ և ասացվածքներ: Վերհիշել նմանօրինակ բովանդակությամբ հեքիաթներ և պատրաստվել ներկայացնելու դասարանի ուշադրությանը. նույն վերնագրով հեքիաթ հորինել. գրել

բեմագիր, հեքիաթը բեմականացնել. Նոր հերոս հավելել և նորովի շարադրել հեքիաթը. նոր ավարտ հորինել. նամակ գրել հերոսներից մեկին և այլն:

Ավ. Իսահակյանի Համբերանքի չիբուխը պատմվածքը ուսուցանելիս նշել նպատակները. պատկերացում տալ 19-րդ դարի վերջին քառորդին հայ իրականության մեջ ապրող գյուղացու չարքաշ կյանքի մասին, բռնապետական կարգերի ,ցարական Ռուսաստանի անօրինությունների մասին, հայ գյուղացու իրավունքների ոտնահարման և ստորացման մասին, ինչպես նաև այդ ամենի դեմ հայ գյուղացու ըմբոստացումը:

Դասն սկսել Մտագրոհ մեթոդով.

1. Ո՞վ էր Օհան ամին և ինչո՞ւ էր ապրում գյուղից ու համագյուղացիներից հեռու՝ ամայի վայրում:
2. Ի՞նչ պատկերացում ուներ աշխարհի և մարդու մասին:
3. ինչպիսի՞ն էր Օհան ամին(հյուրասեր, հյուրընկալ, մարդասեր, շփվող, իսկական զավակ, ապա՝ ընտանիքի հայր):
4. Ինչո՞ւ բանտ ընկավ Օհան ամին:
5. Ի՞նչ արեց Օհան ամին բանտից դուրս գալուց հետո:

Համբերանքի բաժակը լցվել-համբերանքի չիբուխը քաշել:

6.Համբերել, համբերություն, համբերանք-ասել, դարձվածքներ, առածներ, ասացվածքներ, թևավոր մտքեր:

Զուգահեռներ համաշխարհային գրական նմուշների հետԼերմոնտով

7.Պատմվածքից դուրս բերել թևավոր մտքերը, մեկնաբանել, ուրիշ հայ գրողների ստեղծագործություններից նմանատիպ մտքեր ասել:

8.Համբերանքի չիբուխը պատմվածքի հերոսի՝Օհան ամու աշխարհաթող լինելու գաղափարը ցույց տալ համաշխարհային գրականության մեջ:

9. Մարդու և բնության անքակտելի կապը. Բնությունը կատարյալ է:

10. Ընդվզում բռնության, անարդարության, չարի, ագահության, անազնվության և դավաճանության դեմ:

11. Զուգահեռներ անցկացնել Օհան ամու և մեր օրերում ապրող օհան ամիների միջև, 21-րդ դարում ապրող Օհան ամու միջև, որը դարձյալ պայքարում է անարդարության, ստի, կեղծիքի դեմ և անզորությունից փախչում օտար երկրներ:

Դասի վերջնարդյունքները. Արժևորել ազնվությունը, աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հավատարմությունը, բարին և արդարը:

Արժևորել մարդու անկոտրում կամքի դրսևորումը, բազում տանջանքների, ցավերի և տառապանքների միջով անցնելով հանդերձ՝ մարդ մնալու կարողունակությունը:

Պրիզմա մեթոդով: Ով՞ էր Օհան ամին՝ ժողովրդական իմաստություն, հայ ժողովրդի հավաքական կերպար: Մինչ քայլերին անդրադառնալը՝ նշենք հիմնական գաղափարը-Տալիս է երջանկության բանաձևը՝ եղիր ուրախ, գոհ, շնորհակալ ու բավարարվիր ունեցածովդ:

Ժամանակի մասին-Մարթը կերթա, աշխարհքը կմնա:

Հավատարմության մասին-Ասլանը որպես հավատարմության չափանիշ:

Կյանքի ճանապարհ, ինքնամաքրման ճանապարհ դեպի աստված-Ճամփա կիստկեմ դպա հորս քովը:

Երջանկության մասին-Աշխարհքում գլխավոր բանը ուրախսիրտ ըլնելն է:

Մարդու և բնության ներդաշնակության մասին-Գյուղական պարզությունը, մարդու և բնության կապը որպես հեշտ գոյի երաշխիք:

Շնորհակալ լինելու մասին-Ես չար մարդ չեմ, կռիվ ուզող չեմ ու վիճակիցս էլ շա՜տ գոհ եմ:

Համբերության մասին-Քաշենք համբերանքի չիբուխը, մինչև ազատության դուռը բացվի…

Աշխարքը էն գլխից համբերանք է եղել ու կա…

Փողը որպես մարդու՝ մարդկանցից հեռացման պատճառ - Քանի փող կա, մարդ չկա, քանի իմ ու քու կա-սեր ու խիղճ չկա:

Սովորելու կարևորության մասին-Վաստակածդ փողը քուկդ չէ, կրնա ուրիշը գողնա, տանի, բայց ինչ որ սովորեցիր, էն քուկդ է:

Արդարության մասին-Բանտ ըսածդ մեկ հավաք աշխարք է, ուր բռնված գողերն ու արունքտերերն են ապրում, իսկ աշխարքում չբռնված գողերն ու արունքտերերն են:

Սոցիալականացման մասին-Մենակ մարդն ի՞նչ կարող է անել աշխարհի դեմ: Գեղ պիտի կանգնի, որ գերան կոտրի:

Որակյալ կյանքով ապրելու մասին-Հասանք ծերին: Ծերացանք: Վնաս չունի…

Ուրիշի մշակույթի արժեք չի վերցնում. Էպոսի ծուռ դյուցազուններին է նման-Խելառ Մխոն-ամեն բան հաղթել է: իր գդակից բացի ուրիշ գդակ չի դնում:

Ժողովրդական իմաստությունը հանգեց մարդը համընդհանուրի մաս գաղափարին- Շաքարը գցեցիր չայի մեջ, հալավ, կորավ, չկա, բայց չայն անուշցավ…էդպես էլ մարդը գնացական է, նրա լավ գործը՝ մնացական, ըսել է՝ ինքն է մնացական:

Պատմվածքի ուսուցումը ձևավորեց մի շարք արժեքներ, որոնք կարծես թե դարձել են ժողովրդական պատվիրաններ:

1Ընդունել կյանքն այնպիսին, ինչպիսին կա:

2.Հավատարմություն:

3.Կյանքի ճանապարհը որպես ինքնամաքրման ճանապարհ:

4.Ուրախությունը պետք է մարդը ստեղծի, ոչ թե դրսից սպասի:

5.Շնորհակալ լինի:

6. Համբերություն ունենա:

7. Միշտ սովորի նավելացնի գիտելիքները:

8.Չլինել նյութականից կառչած: (փողի մասին)

9. Լինել մարդկանց մեջ: (անձը սոցիալական էակ է)

10.Ապրել արժանավայել:

Հայ գրականության դասավանդման հիմնական նպատակներից է սովորողին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային համամարդկային արժեքներին, գեղարվեստական հերոսների օրինակով նրանց մեջ սերմանել բարոյական արժեքներ՝հայրենասիրություն, պատվախնդրություն, ազնվություն և լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյակամային այլ հատկանիշներ:

Լավագույն օրինակ կարող է համարվել Մուրացանի << Գևորգ Մարզպետունի >> վեպը: Գևորգ իշխանի կերպարն իր մեջ ներառում է նշված հատկանիշներից մի քանիսը՝ հայրենասիրություն, պատվախնդրություն, պատասխանատվություն և այլն: Նյութի ուսուցման ընթացքում կարելի է նախապատրաստել դերային խաղ՝ տարբեր հատվածներից, որն ավելի տպավորիչ կդարձնի նյութի յուրացումը: Աշակերտների համար առավել գրավիչ է, եթե իրենք ՝ուսուցչի օգնությամբ, պատրաստում են զգեստները, զենքերը, զարդերը:

<<Հերոսի որոշումը>> հատվածը ներկայացնելիս աշակերտների ոգևորությունն այնքան մեծ էր, որ թվում էր՝ երբ, թրերը համատեղած, Գևորգ իշխանի հետ երդվում էին, ամեն մեկն իր վրա զգում էր պատասխանատվության չափը: Եվ <<Ծովամարտ>> հատվածն ընտրելիս պետք է սովորեցնել, որ միայն այն ազգն է գոյատևում պատմության քառուղիներում, ով ունի պետականամետ մտածելակերպ:

Կարևոր է համեմատություն կատարել Աշոտ Երկաթի գեղարվեստական կերպարի և պատմական կերպարի միջև: Դերային խաղի ժամանակ, երբ պատրաստվում են նետեր արձակել հագարացիների վրա, աշակերտների աչքերի փայլն ու լարված, նպատակասլաց կեցվածքն ապացույց են այն արժեքի, որը հայրենասիրությունն է:

Կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում էաշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ (օրինակ. Ավ. Իսահակյանի <<Համբերանքի չիբուխը>> պատմվածքում Օհան ամու կերպարը) իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, Մանկապատանեկան կառույցներ և այլն և տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով:

Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝որպես տեղեկատվության աղբյուր, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ<< տեղեկատվական աղբյուրներից հոսող>> հերոսների վարքագծում:

Աշակերտները իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի գծերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Օրինակ կարելի է բերել. դերային խաղերից հետո ոգևորությունն այնքան երկարատև էր, որ, նույնիսկ կարճատև դասամիջոցներին, թիկնոցներով , թրերով, տեգերով, աշտեներով ու ջիդաներով զինված, ներկայացնում էին հատվածները: Աշակերտին նյութը սովորեցնելու արդյունավետ մեթոդներից է ներգրավվածությունը, որն էլ դրսևորվում է դերային խաղի ժամանակ:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Օրինակ կարելի է բերել. Հ Թումանյանի <<Գիքորը>> պատմվածքը ուսուցանելիս մտագրոհ մեթոդով համախմբել աշակերտների կարծիքները << Ի՞նչ խորհուրդ կտայիր Գիքորին>> հարցի միջոցով և, կապելով վերը նշվածի հետ, արդիականացնել այս ժամանակաշրջանում:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն):

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով :Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Կարևոր արժեքներից է նաև ռազմահայրենասիրական դաստիարակությունը:

Դրանում մեծ է ազգային հերոսների կերպարների հանրահռչակման և այդ ոգով աշակերտներին կրթելու նշանակությունը: Հայ ժողովուրդն իր պատմության ողջ ընթացքում հերոսների պակաս չի զգացել, որոնց շնորհիվ դիմացել է հազարամյակների դաժան փորձություններին: Այդ հերոսների օրինակով մենք կրթում և դաստիարակում ենք մեր սաներին, որոնք իրենց իդեալն են դարձրել այս կամ այն նվիրյալին: Ուսումնառության ընթացքում հաճախ կազմակերպվում են համակցված

դասեր ռազմագիտություն առարկայի հետ, այցելություններ են կազմակերպվում ռազմական ուղեկալներ, ուր աշակերտները ծանոթանում են ռազմական արվեստի գաղտնիքներին, քանի որ, տարածաշրջանի իրավիճակից ելնելով, բոլորս էլ պարտավոր ենք զինվոր լինել: Աշակերտներն զինվորականների կողմից տեղեկություններ են հավաքում ռազմական գործիչների, նշանավոր ֆիդայիների, ազատամարտիկների մասին և կազմում ու ներկայացնում ցուցատախտակ: Ապա

Կերպարային քարտ մեթոդով, որը շատ նպատակահարմար է հայրենասիրության դաստիարակության համար, կապ են ստեղծում գրականություն-պատմություն-ռազմագիտություն առարկաների միջև: Նշված են ազգային հերոսներ, հայրենասեր կերպարներ, հետաքրքիր և խորիմաստ ասույթներ, բնութագրող մեջբերումներ կերպարների մասին :

Աշակերտները սիրով են մասնակցում խմբային աշխատանքներին, երբ օգտագործվում է Պարադիգմա կրթական հիմնադրամի քարտադարանը, որի օգնությամբ ստեղծվում է միջառարկայական կապ պատմություն առարկայի հետ: Աշակերտների՝ հայրենասիրությունը որպես ազգային արժեք ընկալելուն շատ են նպաստում վիպական հերոսների պատմական կերպար և գեղարվեստական կերպար քննարկումները:

Խորապես ճշմարիտ է՝ժամանակն է ծնում հերոսներին: Նույնքան էլ ճշմարիտ է, որ ժողովուրդը, ապավինելով նրանց, դարեր շարունակ սնվում ու հզորանում է իր արժանի զավակների շուրջ հյուսված հերոսապատումներով: Ազգը, որի պատմական հիշողության մեջ, ինչպես օրգանական ամբողջություն, միահյուսված են քաջ Վարդանի և զորավար Անդրանիկի՝մերօրյա հնչեղության լեգենդները, վաղուց գտել է հավերժություն տանող իր ճամփան:[4]

Հայ գրականության և հայոց պատմության յուրաքանչյուր դասին նախապատրաստվելիս կարևորում են բովանդակային մասերը, որոնք նվիրված են հայ ազատամարտի նշանավոր գործիչներին և ոգեշնչում ու հայրենասիրությամբ են վարակում աշակերտներին:Դա առավել նպատակային և դյուրին է դառնում ազգային ազատագրական պայքարի թեմաներն ուսումնասիրելիս:Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները մեծ հետաքրքրությամբ են լսում հատկապես ազատագրական պայքարի նվիրյալների կյանքի ու գործունեության մասին պատմող դրվագները:

[4] Տե՛ս <<Հայագիտությունը դպրոցում>> գիտամեթոդական վերլուծական հանդես,Երևան2016թ.էջ43

Հայ գրականության և հայոց պատմության դասաժամերին է, որ աշակերտները, ուսուցչի օգնությամբ և ուղղորդմամբ, բացահայտում են, թե ովքեր են իրենք, ովքեր են իրենց նախնիները, որտեղ են ապրել, ինչ պատմություն ունեն, ինչ ներդրում ունեն համամարդկային մշակույթի ասպարեզում:Երբ որ աշակերտը ուսումնասիրում էհայ ժողովրդի պատմության հերոսական էջերը, ազատագրական պայքարի դրվագները, հերոսների անձնվիրումն ու հայրենասիրության բազում օրինակներ, ինքն էլ կարծես ձգտում է հասնել այդ կերպարներին: Դրա վառ օրինակը հենց Ղարաբաղյան 3-րդ պատերազմի մասնակից մեր հերոս հայորդիներն են, որոնք իրենց հայրերի ու պապերի օրինակով նետվեցին մարտի՝մոռանալով սեփական կյանքի մասին:

Դասընթացի ծրագիրը պետք է կազմված լինի գիտամանկավարժական հիմնարար սկզբունքների պահանջներին համապատասխան.այն է՝նյութի մատչելիություն, տարիքային համապատասխանություն, գիտամեթոդական բազմազանություն:

Չափազանց կարևոր է միջառակայական կապերի միջոցով գրականության դասաժամերին դպրոցականի հոգում վառել հայրենասիրության կրակը՝ պատմավեպերի հերոսների, նրանց գործողությունների, անձնազոհության և հայրենանվիրության բացահայտումներով:

Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ:

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրանց մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների,կամքի, բնավորության,

զգացմունքների հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն0 առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն:Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները,գործում է անկաշկանդ,ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:

Հայոց պետականության ամրապնդման նպատակով անհրաժեշտ է դպրոցի կրթության և դաստիարակության բովանդակությունը հագեցնել ազգային մշակույթի արժեքներով՝ միաժամանակ ընդգծելով համամարդկայինը:

Ազգային և համամարդկային արժեքները յուրացվում են ողջ կյանքի ընթացքում ոչ միայն հատուկ այդ նպատակին ծառայող քարոզչության ու տարաբնույթ գործունեության ընթացքում: Մարդն ընդօրինակում է ազգային ապրելակերպը, յուրացնում լեզուն, մշակույթը, հոգեբանությունը և այլ բազմաթիվ որակներ՝ աստիճանաբար ձևավորվելով որպես տվյալ ազգի լիարժեք անդամ:Ազգային դաստիարակությունը ձևավորում է հայ մարդուն, սակայն համամարդկային արժեքներն իր մեջ չամփոփած հայը չի կարող լինել իր ազգի լիարժեք անդամ:Հայ դպրոցի, առհասարակ հայերի դաստիարակության կարևորագույն խնդիրն է՝ ապահովել ազգայինի և համամարդկայինի մեկտեղումը:Ուրեմն ազգային դաստիարակությունն իր մեջ պետք է ներառի նաև համամարդկային արժեքներ;

Հիմա առավել, քան երբևէ պետք է անընդհատ աշակերտների հետ զրուցել ազգային արժեքների դերի և կարևորության մասին, անընդհատ հիշեցնել, թե ովքեր են իրենց նախնիները, ինչ փառավոր անցյալ են ունեցել, և որ մենք պարզապես իրավունք չունենք կորցնելու այն, ինչ մեր պապերն իրենց արյան գնով պահել ու փոխանցել են

մեզ:Սովորեցնելուց զատ սեփական օրինակով աշակերտների մեջ ամրապնդելը վերը նշվածը:

Առաջնահերթություն է, որ աշակերտները բացահայտեն, հետազոտեն հայոց պատմության և բանահյուսության վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը և վեր հանեն հույժ կարևոր փաստերից մեկը, այն, որ հայ ժողովուրդը ձևավորվել ու պատմական հազարամյա ուղին անցել է իր բնօրրանում՝ Հայկական լեռնաշխարհում:

Հայ ժողովուրդը, շփվելով և փոխազդեցությունների մեջ լինելով տարբեր քաղաքակրթությունների հետ, պահպանել ու զարգացրել է իր ինքնատիպ մշակույթը, ազգային նկարագիրն ու գոյապատկերը: Դրա շնորհիվ հայությունը հազարամյակների միջով հասել է մարդկության պատմության արդի փուլին:Ահա թե ինչու հայկական մշակութային հարուստ ժառանգության համակողմանի ուսումնասիրումը կազմել է դասագրքերի կարևոր բովանդակային ուղղություններից մեկը:Հայ ժողովրդի պատմության բովանդակային առանցքը կազմել է նաև հայկական պետականության պատմությունը, որը սերտորեն կապվում է նույն քաղաքակրթական խնդիրների հետ:[5]

Հայ ժողովուրդը մշտապես ապրել ու արարել է մի տարածաշրջանում, որտեղ միշտ հատվել ու բախվել են տարբեր ազգերի ու քաղաքակրթությունների շահերն ու հակասությունները:Այս հանգամանքն ավելի կարևոր է դարձրել այս <<քաղաքակրթական խաչմերուկում>> ազգային նկարագիրն ու դիմագիծը անաղարտ պահելու հանգամանքը:Մարդկության պատմության արդի փուլում հայ ժողովուրդը դարձյալ բախվում է այս խնդիրներին, քանի որ մեր տարածաշրջանում դարձյալ բախվում են աշխարհի մեծ պետությունների շահերը, և յուրաքանչյուր երկիր փորձում է իր կողմը գրավել հայ ժողովրդին: Այս պայմաններում դարձյալ չափազանց կարևոր է առաջ գնալ ազգային ու պետական շահերը առաջնահերթություն ունենալու ճանապարհով, և պատմական փորձը ցույց է տալիս, որ ինչպիսի ժամանակաշրջանի ծնունդն էլ լինեն պատմության ընթացքն ուղղորդող անհատները, նրանք միջազգային հարաբերություններում պետք է լինեն զգոն և հավասարակշռված:Հատկապես փոքր ազգերի ներկայացուցիչները, գտնվելով մեծ տերությունների հետ շախմատային նույն հարթակի վրա, պետք է մտածեն ոչ թե հակամարտելու, այլ առավել՝շահելու

[5] Տե՛ս Հանրակրթության պետական կրթակարգ Չափորոշիչներ ծրագրեր մեթոդներ Երևան2007թ.

մասին:<<Մեծերը>> չեն ներում<< փոքրերի>> ինքնուրույն քայլերը:Այդպես եղել է անցյալում, այդպես է հիմա:[6]

Դպրոցականների ազգային մտածողությունը խթանելու նպատակով պետք է սովորողներին հանձնարարել լրացուցիչ նյութեր հավաքել, օրինակ՝հայդուկների, ազատամարտիկների կյանքի, գործունեության վերաբերյալ: Այս ընթացքում սովորողները կհարստացնեն իրենց գիտելիքները տվյալ նյութի շուրջ, նաև կսովորեն ինքնուրույն օգտվել այլ աղբյուրներից, զատել տեղեկույթի կարևորն ու երկրորդականը, հանգել ինքնուրույն եզրահանգումների, ձևավորել սեփական դիրքորոշումը:

Դպրոցականների շրջանում ազգային մտածողության ձևավորման և խթանման համար կարևոր է անդրադառնալ ինքնաճանաչողության հարցերին:

Ինքնությունը բազմաթիվ անհայտներով մի կառույց է՝պարուրված խորհրդանիշներով, տարատեսակ իրապատումներով, տեսլականներով ու առասպելներով, որոնք ժամանակի ընթացքում ստանում են տարբեր բացատրություններ: Այս առումով միշտ էլ առաջանում է ինքնության/ինքնաճանաչողության/ պատմական ձևերի իմաստավորման, ավանդածի մեկնաբանության և ազգային ինքնության տարրերի արդիականացման անհրաժեշտություն:

Ինքնաճանաչողությունը պարտադիր ենթադրում է երկխոսություն անցյալի հետ, որի ժամանակ անցյալը պետք է դառնա ներկայի մաս, ներկայի անցյալ, որովհետև ինքնության ցանկացած հարացույց անպատկերացնելի է առանց պատմական շերտի: Սակայն մեզանում կարծես թե բացակայում է անցյալի հետ բովանդակային խոսույթը/դիսկուրսը/.մեր անցյալի պատմամշակութային ժառանգությունը գերազանցապես պահվում է ազգային գրադարաններում ու մատենադարաններում , հիմնականում՝ այլոց ցուցադրելու համար:Անցյալը բացակայում է ներկայի մեջ: Մեզանում գերիշխում է ազգային արժեքների նկատմամբ զգացմունքային ու ձևական մոտեցումը:Իսկ արժեքները, եթե միայն պահվում են մատենադարաններում ու թանգարաններում, ապա ոչ միայն կորցնում են իրենց գործառույթային նշանակությունը, այլև դրանց բացակայության հետևանքով մարդկանց հոգիներում

[6] Տե՛ս Հայագիտությունը դպրոցում գիտամեթոդական վերլուծական հանդես, Երևան2017թ.էջ22

ստեղծվում են դատարկ տարածություններ, որոնք լցվում են օտարածին ցածրաճաշակ թափոններով:Եթե բավարարվում ենք միայն այդ արժեքների ֆիզիկական գոյությունը փաստելով, ապա դրանք դադարում են արժեքներ լինելուց:Այլ խոսքով՝արժեքներն ոչ միայն պետք է պահպանել, այլև դրանք յուրացնելով՝անընդհատ հարստացնել ու արդիականացնել;[7]

Եզրակացություն

Որպես ամփոփում կարելի է փաստել, որ ազգային արժեհամակարգի ձևավորմանը դպրոցում տարբեր դասաժամերին անհրաժեշտ է կարևոր տեղ հատկացնել, իսկ հայ գրականության, պատմության, հատկապես հայոց պատմության և հատկապես ավագ դպրոցի դասաժամերին՝ առավել ևս:

Հիմա հայ ժողովուրդն ու Հայաստանի Հանրապետությունն ապրում են դժվարագույն ժամանակներ, երբ վտանգված է հայ ժողովրդի և հայոց պետականության գոյությունը: հիմա նոր Ավարայրի ու նոր Սարդարապատի կարիքը կա, հիմա առավել, քան երբևէ պետք է համախմբվել, մեկ միասնական բռունցք դառնալ, որպեսզի հնարավոր լինի հաղթահարել մեր պետության գլխին կախված հերթական վտանգը:

Ժամանակի հրամայականն է կրթել ու դաստիարակել ազգային մտածողությամբ ու արժեքներով տոգորված սերունդ, նրանց մեջ ներարկել հայրենասիրություն, համախմբվածություն և սառը դատողություն:Բանավեճերի միջոցով նրանց ցույց տալ, թե ինչերի է ընդունակ իր հողն ու ջուրը ամեն գնով պաշտպանելու պատրաստ զինվորը, հայ գյուղացին ու սովորական հայ քաղաքացին:

Սովորողներին պետք է ոգևորել անցյալի պատմական հերոսական դրվագներով, թե ինչպես են հայկական փոքրաթիվ ուժերը հաղթել թշնամու բազմաքանակ ու լավ սպառազինված ուժերին՝փորձելով հիմնավորել, որ հաջողության հասնելու գրավականն ամենևին էլ թվական գերակշռությունը չէ, այլ նպատակը՝հանուն որի ելնում են պայքարի :

Հայ ժողովրդին բաժին է հասել դժվար ու պայքարով լի ճակատագիր, բայց նա միշտ պայքարել է ու իր զավակների արյան գնով ամրագրել է իր գոյության իրավունքը:Սա էլ կանցնի, առավել քան համոզված եմ, որ հաղթանակը մերն է լինելու, քանզի մեր գործն արդար է, մենք պայքարում ենք մեր հայրենիքի յուրաքանչյուր թիզ հողի համար,

[7] Տե՛ս <<Հայոց ինքնության հիմնահարցեր>> Ս. Զաքարյան, Երևան2020թ.էջ7

այլ ոչ թե զավթում օտարինը, ուստի պետք է համախմբվել, մի կողմ թողնել բոլոր տեսակի տարաձայնությունները և ձեռնամուխ լինել ազգանվեր գործին՝ հայրենիքի փրկությանը:

Այսօր փայլուն սերունդ է մեծանում՝ համարձակ, պահանջատեր ու նախանձախնդիր, և պետք է նպաստել, ուղղորդել, որ նրանք հայրենասեր ու հայրենաճանաչ լինեն, իրենք են երկրի ապագան ու երկիրը շենացնողները:

Դպրոցական դասագրքերում, հանրակրթական և առարկայական չափորոշիչներում պետք է ավելի շատ ուշադրություն դարձնել ազգային արժեհամակարգի ձևավորման հարցերին, ավելացնել հայագիտական առարկաներին հատկացվող ժամաքանակները, հնարավորություններ ստեղծվեն հատկապես ավագ դպրոցի աշակերտների հետ հաճախակի կազմակերպել արշավներ դեպի պատմամշակութային հնավայրեր, որպեսզի նրանք մոտիկից տեսնեն ու ճանաչեն հայրենիքի ամեն անկյունը, նախագծային աշխատանք հանձնարարել, որի ընթացքում սովորողները ինքնուրույն կհետազոտեն ու կբացահայտեն իրենց ծննդավայրի պատմությանը, բարբառին, ընդհանրապես դարավոր մշակույթին վերաբերող փաստեր:

Գրականության ցանկ

1.<<Հայոց ինքնության հիմնահարցեր>> Ս. Զաքարյան, Երևան 2020թ.

2.Հանրակրթության պետական կրթակարգ Չափորոշիչներ ծրագրեր մեթոդներ Երևան 2007թ.

3.<<Գիրք պատմության ուսուցման Ինչու՞, Ինչպե՞ս>> , Պարադիգմա կրթական հիմնադրամ, Երևան 2020թ.

4.<<Հայագիտությունը դպրոցում>> գիտամեթոդական վերլուծական հանդես, Երևան 2016թ.

5. Մովսես Խորենացի <<Հայոց պատմություն >>Էջմիածին Տփղիս

6<<.Մայրենի >> հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք Երևան 2019թ.

7.Համացանց